Պարույր Սևակ

Ուշացած իմ սեր

3

XI

Ու մեր սերը բացվեց,
Բերնեբերան անցավ.
Օրվա հերոս դարձավ
Ու նյութ օրակարգի:
...Ու ես էլ իմ կարգին
Խոսք տվեցի, անգի՛ն,
Այսուհետև էլ քեզ... քե՛զ... չսիրե՛լ,
Իշխել հոգուս վրա,
Սրտիս տիրել...
Ա՜խ, սրտի տեղ եթե լիներ լեզո՛ւն,
Որ խոստացավ հանգիստ քեզ չսիրել:
Հասկանո՞ւմ ես, թե ես ինչ եմ ասում,
Հասկանո՞ւմ ես արդյոք. քե՛զ... չսիրե՛լ...
Գուցե գիտակցաբար ես ստեցի՞,
Գլուխս ազատեցի՞:
Չէ՛, պարզապես
Կարծես ընդունված է ժողովներում

Ուրի՛շ տեսակ խոսել:
Ինչպես ընդունված է ժողովներում՝
Նույնն արեցի ես էլ...
Բայց և այնպես հիմա ա՛յլ լեզվով են խոսում
Այս տողերը:
Բարեկամնե՛ր,
Անգի՛ն,
Այսօր ես հուզվել ու սրտնեղել եմ:
Բարեկամնե՛ր,
Անգի՛ն,
Չէ՞ որ խոսք եմ տվել էլ չսիրել,
Չէ՞ որ խոստացել եմ իշխել հոգուս վրա,
Սրտիս տիրել...
Խոստացել եմ:
Սակայն
Եթե բան դուրս չգա՞...
Թո՛ղ որ ասեն, թե սա
Սովետական մարդուն բնա՛վ սազական չէ,
Թո՛ղ որ ասեն, անգի՛ն,
Որ մեր սերը կյանքում բնա՛վ տիպական չէ,
Թո՛ղ որ այդպես:
Սակայն
Չէ՞ որ կյանքում նա կա,
Չէ՞ որ արժան գտան նրան նիստի տանել,
Քննարկումից հետո կեսլուրջ ու կեսկատակ
Չէ՞ որ խորհուրդ տվին.
-«Կարելի՛ է անել...»:
Ո՛չ: Միայն ո՛չ այնպես, ինչպես հարմար գտան:
Ես գործ ունեմ մարդկա՛նց,
Ո՛չ թե ամեն կարգի նրանց խորհրդի հետ.

Ո՛չ թե թաքուն կապի,
Ես գործ ունեմ միայն սիրո ու սրտի՛ հետ...

XII

Հիմա դու տեսնում ես, իմ սիրելի՛,
Թե մեզ ո՛ւր հասցրրեց քո ուշացած սերը,
Քո ուշացա՛ծ սերը,
Դու չուշացա՛ծ իմ սեր:
Դատափետում եմ քեզ
Ու խստորեն դատում
Նրա՛ համար, որ դու
«Ընտանիք ես քանդում»:
Բախտի ի՛նչ չար կատակ
Եվ ի՛նչ ծաղր է հիմար,
Դո՛ւ, որ հենց ծնվել ես ընտանիքի համար,
Սուրբ օջախի՛,
Սիրո քո տանիքի՛ համար,
«Ընտանի՛ք ես քանդում»...
Եվ դու պարտավոր ես փրկե՞լ մի ընտանիք,
Որ շա՛տ վաղուց արդեն կործանվել է ինքը.
Հանուն կործանվածի կործանումի մատնել
Ուրի՞շ մի ընտանիք:
Ու՞ր է այստեղ խիղճը,
Դատողությո՛ւնն ուր է,
Ո՞ւր է առողջ միտքը.
Հանուն փլված մի տան՝
Մեկ այլ տանիք քանդել,
Եվ ինչպիսի՛ տանիք...
Եվ մի՞թե քեզ դատող,

Դատափետող մարդիկ չեն իմանում,
Որ դու... հեղո՞ւկ չես դու,
Որ քո ձևը փոխես այն ամանում,
Որտեղ որ քեզ կածեն...
Մի՞թե մինչև հիմա ոմանք չեն հասկացել.
Դու կենդանի՛ մարդ ես,
Ամենամա՛րդ մարդը,
Սիրո՛ղ մարդը,
Քեզ չի կարող ձև տալ ամեն կուժ ու կուլա,
Եվ որ չորստառանի «մարդ» կոչվածը կյանքում
Շա՛տ ավելի բարդ է,
Քան թե հազարաբառ, թեկուզ սրբագործված, մի ֆորմուլա...
Եվ դու ինչպե՞ս հիմա բերան իսկ չբանաս,
Ինչպե՞ս դու նրանց դեմ չըմբոստանաս,
Երբ դու շա՛տ լավ գիտես.
Բոլո՛ր օրենքները նրա՛ համար են լոկ,
Որ պաշտպանեն կյանքում մարդկայի՛նը,
Մարդո՛ւն,
Եվ որ բոլոր տեսակ օրենքներից բացի
Կա մի օրենք ևս - և շա՛տ խելոք.
Բոլոր օրենքների ո՛չ թե տառն են կարդում,
Այլ էությո՛ւնը լոկ...
Եվ դու ինչպե՞ս հիմա բերան իսկ չբանաս,
Ինչպե՞ս դու նրանց դեմ չըմբոստանաս,
Ինչպե՞ս չասես, որ քեզ
Պետք է սուրբ ընտանի՛ք,
Բայց ո՛չ ընտանիքի ծաղրանկար,
Պետք է օջա՛խ մաքուր,
Սիրո գողտրիկ տանի՛ք,
Ուր չի կարող լինել ոչ մի կարիք

Խաղալ «լավ ընտանիք».
Մի հա՛րկ,
Ուր հա՞րկ չկա
Խաղալ, թե «սրա պես լավ հարկ չկա՞».
Մի հա՛րկ,
Ուր իսկապես չկա կեղտի նշույլ,
Եվ ո՛չ երբեք մի հարկ
Որտեղ մութ անկյուն են կեղտը քշում՝
Հանուն ըն-տա-նե-կա՞ն սուրբ մաքր-ռու-թյա՞ն...
Ա՛խ, չէ՞.
Քո մեծ սրտով
Դու սովոր չես նման մի փոքրության...
Ու ցավում է հիմա մեր վիրավոր հոգին,
Նա ցավում է հիմա՝ ատամի՛ պես:
Մենք և՛ երջանիկ ենք,
Ե՛վ պատրժված հիմա,
Դու՝ Եվայի՛ նման,
Իսկ ես՝ Ադամի՞ պես:
Ա՛խ, ցավում է հոգիդ նրա՛ համար,
Որ աստրծո գործած հին սխալից հետո,
Եվ քանի՞ դար հետո,
Այս անաստված մարդիկ նաև հիմա
Մեր նկատմամբ, կյա՛նքըս, նույն սխալն են գործում՝
Մեզ պատժում են... գտած երջանկությա՞ն համար:
Թո՛ղ որ դրախտ պետք չէ.
Մենք մեր ձեռքերով ենք այն ստեղծել փորձում:
Բայց դե ինչի՞ համար,
Ախար ինչի՞ համար
Պնդել, որ դու ընդմիշտ նույն դժոխքո՛ւմ մնաս:
Բայց դե ինչի՞ համար,

Ախար ինչի՞ համար
Մի նոր դժոխք սարքել և՛ ինձ, և՛ քեզ համար,
Նույնպես վարվել նաև քո մանկան հոր՝
Մեզնից ոչ պակաս դժբախտի հետ...
Ա՛խ, ի՜նչ հեշտ է
Խաղալ մարդկանց խեղճ բախտի հետ...

XIII

Ես լա՛վ գիտեմ.
Այստեղ հերոսություն է պետք,
Հերոսություն է պետք՝
Ինչպես երեկ կռվում:
Փոքրոգություն կյանքում ես չեմ արել երբեք,
Մահվան հանդեպ վախից չեմ կորանում-կեռվում:
Ճանաչում եմ և քե՛զ.
Մենք հեռու չենք հիմա
Հերոսական քայլից: Բոլորովի՛ն:
Ինքըդ Զոյային ես անհունորեն նման,
Իսկ ես շատ եմ սիրում Մատրոսովին:
Սակայն այստեղ մահով բա՜ն չես շահի,
Իզո՛ւր բան է հիմա դիմել մահի:
Նա չի կարող այստեղ ցույց տալ մեզ օգնություն:
Երեկ՝ կռվում մահը հերոսություն էր մեծ,
Այսօր՝ աններելի փոքրոգություն:
Երեկ այնտեղ մահով շահում էիր դու կյանք,
Մահըդ նոր կյանք դարձնում,
Այսօր այստեղ մահով,
Քո մի՜ հատիկ մահով,
Երեք կյանք ես կորցնում.-

Երկու՝ ամբողջովին, ու երկու՝ կես.
Փոքրիկ որդիդ՝ կիսո՛վ,
Նրա հայրը՝ կիսո՛վ,
Ամբողջովի՞ն՝ դու ինձ
Ու ես էլ՝քեզ...
Իսկ թե փոթորիկ է սա մի բաժակ ջրո՞ւմ:
Թո՛ղ որ այդպես,
Սակայն նա կյա՞նք է կործանում:
Իսկ թե մի հարց է սա,
Որ փակ նիստից պիտի լայն ասպարեզ քաշվի՞.
Իսկ թե մի հարց է սա,
Որի մասին պիտի ամբո՛ղջ ձայնով խոսվի:
Խոսվի բա՛ռնը և բա՛ց,
Եվ ո՛չ լոկ մերպեսի,
Այլև բոլո՛ր նրանց,
Բոլոր նրա՛նց մասին,
Ովքեր կես լրջորեն ու կես կատակ
Վաղը մեր նմանին խորհուրդ կտան.
-«Կարելի՞՞ է անշուշտ,
Մարդը մարդ է, քար չէ...»:
Չէ՞, նման խորհուրդը մեզ համար չէ:
Չէ՞, նման խորհուրդը մեզ հարմար չէ,
Մեր աշխարհի՛ն նման ու հարմար չէ:
Թեկուզ նրա՛ համար մեզ հարմար չէ,
Որ մարդն, այո՛, մարդ է, մարդը քար չէ:
Թեկուզ նրա՛ համար մեզ հարմար չէ,
Մեր աշխարհի՛ն նման ու հարմար չէ,
Որ նա մեր աշխարհն է,
Նա հին Սպարտա՞ չէ,
Որտեղ դատում էին ու խիստ պատժում գողին

Ո՛չ հափշտակության,
Ո՛չ էլ գողության մեջ խառնվելու համար,
Այլ լոկ անբավարար ճարպկությա՜ն՝
Բռնվելո՛ւ համար:
Իսկ մենք...
Իսկ մենք չէ՞ որ դեմ ենք ամե՛ն տարողության,
Ամե՛ն չափսի գողի,
Եվ առավել ևս՝ լա՛վ գողության,
Եվ առավել ևս՝ ճարպի՛կ գողի...

XIV

Իսկ ի՞նչ անել հիմա:
Անուղղելի-հիմար
Սիրտը սահա նորից
Կուրծքս այնպե՛ս թակում,
Այնպե՜ս է տկտկում,
Կարծես թե Մորզեի այբուբենով
Ամենքին է դիմում մի զուսպ քենով,
Ամենքին է տալիս իր նույն հարցը հիմար,
-«Իսկ ի՞նչ անել հիմա»...
Սիրտը մոլեգնորեն կուրծքս է ծեծում,
Ինչ-որ մեկն էլ
Դուռն է ծեծում հուշիկ:
Հարբածի պես ելնում,
Գնում դուռն եմ բացում:
Դուռն եմ բացում -
Եվ ի՜նչ.
Դո՛ւ ես, իմ անգին՜ը,
Դու իմ տունն ես եկել,

Եվ այնպես ես եկել,
Որ որոշված ժամին վեր չկենաս
Ու մորթվողի նման դուրս չգնաս,-
Որ չգնա՛ս,
Մնա՛ս,
Ընդմի՛շտ մնաս...
Ու ես լուռ նայում եմ քո աչքերին,
Սիրո՛վ, ցավո՛վ լեցուն,
Տագնապներո՛վ լեցուն
Այս աչքերին:
Մի՛ տագնապիր, ոչի՛նչ, առանձին բան չկա՛.
Թո՛ղ որ քո մանկիկը ինձ անվանի «քեռի»,
Բայց նա «քույրի՛կ» կասի վաղը մեր աղջկա՛ն...
1952-1953թթ
Մոսկվա